ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԸ 2011-2013ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ. ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Սամվել Մարտիրոսյան[*]

2011-2013թթ. Հայաստանում կտրուկ աճել է ինտերնետից օգտվողների թիվը, ինչի արդյունքում բնակչության կեսից ավելին այսօր օգտվում է համացանցից: Օգտվողների մեծ մասը սոցիալական ցանցերի այցելուներն են:

Ըստ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տվյալների, լայնաշերտ ինտերնետ ծառայությունների բաժանորդների թվաքանակը 2011թ. կազմել է 378.159, իսկ ընդհանուր առմամբ ինտերնետ ծառայությունների բաժանորդների թվաքանակը 2011թ. դեկտեմբերի 31-ին կազմել է 1.835.002 (տե՛ս *Նկար 1*):

2009-2010թթ. Հայաստանում սոցիալական ցանցերի այցելությունների կտրուկ աճն ընթանում էր ինտերնետից օգտվողների աճին զուգահեռ: Անմիջապես առաջատար դիրքեր գրավեց ռուսաստանյան *Odnoklassniki* սոցիալական ցանցը, որն առայսօր թիվ մեկ ցանցն է ըստ այցելությունների թվի: Այս հարթակի այցելուների ամսական թիվը գրեթե հասնում է 700 հազարի, այսինքն՝ կազմում է ինտերնետից օգտվողների մոտ 40%-ը և երկրի բնակչության մոտ քառորդ մասը (տե՛ս *Նկար 2*):

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

Նկար 1

1998-2011թթ. Հայաստանում ինտերնետ կապից օգտվողների տոկոսի աճն ըստ Համաշխարհային բանկի և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տվյալների



Նկար 2

Odnoklassniki սոցիալական ցանցի հայաստանյան այցելուների ամսական լսարանը 2010-2013թթ., տվյալներն ըստ Liveinternet.ru համակարգի



Չնայած, հարկ է նշել, որ 2012-2013թթ. ընթացքում նկատվում է տվյալ հարթակի լսարանի հագեցում և աճ այլևս չի նկատվում: Ըստ *Mail.RuGroup*-ի (որը տնօրինում է *Odnoklassniki* հարթակը) «Սոցիալական կայքեր» բիզնես ստորաբաժանման մարքեթինգի և ռազմավարական հաղորդակցությունների տնօրեն Ալեքսանդր Իզրյադնովի, բջջային հեռախոսի միջոցով կայքից օգտվում է շուրջ 272 հազար մարդ: Լսարանի հիմնական միջուկը 18-24 տարեկան երիտասարդներ են, ընդ որում՝ տղամարդկանց թիվը, ներկայացված վիճակագրության համաձայն, գերազանցում է կանանց թվին (60% - 40%)[1]:

Հայաստանում հաջորդ առաջատարն այցելուների թվաքանակով *Facebook* սոցիալական ցանցն է: Տվյալ հարթակում 2013թ. ապրիլի սկզբին ակտիվ օգտատերերի թիվը հասնում էր 415 հազարի, որը կազմում է երկրի բնակչության մոտ 12%-ը (տե՛ս *Նկար 3*):

Նկար 3

Facebook.com սոցիալական ցանցի հայաստանյան լսարանի աճը 2012թ. օգոստոս - 2013թ. փետրվար ամիսների ընթացքում, տվյալներն ըստ Socialbakers.com համակարգի



[1] Մեդիամաքս, 22 հունիսի 2012թ., Օդնոկլասնիկի սոցցանցը այսուհետ հասանելի է հայերեն լեզվով, http://www.mediamax.am/am/news/society/5281/

Նկար 4

Facebook.com սոցիալական ցանցի հայաստանյան լսարանի աճն ըստ տարիքային հատվածների, 2013թ. հունվար-մարտ ամիսներին, տվյալներն ըստ Socialbakers.com համակարգի



Նկար 5

Facebook.com սոցիալական ցանցի հայաստանյան լսարանի բաշխումն ըստ տարիքային հատվածների, տվյալները՝ 2013թ. մարտ ամսվա դրությամբ, ըստ Socialbakers.com համակարգի





Armenia Facebook demographics is other social media statistics we monitor. The largest age group is currently **18-24** with total of 138 580 users, followed by the users in the age of **25-34**.

There are **48% male** users and **52% female users in Armenia**, compared to 65% and 35% in **Haiti** and 64% and 36% in **Bahrain** .

Այստեղ այցելուների ամենաարագ աճող հատվածն են կազմում 18-34 տարեկան երիտասարդները (տե՛ս *Նկար 4*): Այս խումբը կազմում է *Facebook* սոցցանցի 65%-ը (տե՛ս *Նկար 5*):

Նկար 6

Հայաստանում ամենից շատ այցելվող կայքերն ըստ Alexa.com-ի



Նկար 7

Twitter-ի վիճակագրությունն ըստ topsy.com-ի: #armvote13, #armvote, #Hayrikyan պիտակների (hashtag) կիրառումը 2013թ. հունվար-փետրվար ամիսներին



Մի շարք այլ սոցիալական ցանցեր նույնպես Հայաստանից ինտերնետ օգտվողների համար ակտիվ հարթակներ են հանդիսանում: Ըստ *Alexa.com* -ի վիճակագրության, ռուսաստանյան *VKontakte* սոցիալական ցանցը Հայաստանից այցելությունների թվով 8-րդ կայքն է 2013թ. մարտ ամսվա դրությամբ (2012թ. նոյեմբերին դեռ 10-րդն էր): *Alexa.com*-ի վիճակագրության տվյալները շատ ճշգրիտ չեն, սակայն ցույց են տալիս մոտավոր իրավիճակը: Չնայած հստակ բաց վիճակագրություն այս հարթակի մասին չկա, սակայն հայտնի է, որ 2013թ. մարտ ամսվա դրությամբ հայաստանցի գրանցված օգտատերերի թիվը հասնում է 408 հազարի (համեմատության համար՝ 2012թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ Հայաստանից գրանցված օգտատերերի թիվը հասնում էր 310 հազարի:)

Twitter-ը դեռևս շարունակում է պասիվ հարթակ մնալ Հայաստանում, այստեղ օգտատերերի թիվը չի գերազանցում մի քանի հազարը: Սակայն 2012թ. երկրորդ կեսին և 2013թ. ընթացքում արդեն նկատվում է աշխուժության աճ: Այսպես, նախագահական ընտրու-

թյունները բավական ակտիվացրին այս հարթակը, և ընտրություններին վերաբերող #armvote13 պիտակը (*hashtag*) դարձավ ամենակիրառվողներից մեկը տարածաշրջանում:

Առանձնահատուկ աճ է դրսևորում *Youtube* հարթակը, որը սոցիալական ցանցի տարրեր է պարունակում և, բացի դրանից, ունի լուրջ ազդեցություն հայաստանյան հասարակական-քաղաքական և լրատվական դաշտի վրա: Չնայած այստեղ էլ բաց վիճակագրություն չկա օգտատերերի թվի վերաբերյալ, սակայն Հայաստանից տեսանյութերի ներբեռնումները, ընդհանուր համաշխարհայինների քանակի համեմատ, վերջին տարիներին աճել են մոտ տասն անգամ (տե՛ս *Նկար 8*):

Նկար 8

Հայաստանից Youtube-ի տեսանյութերի ներբեռնումներն ընդհանուր համաշխարհայինների քանակի համեմատ 2009-2013թթ.: Տվյալներն ըստ Google Transparency Report-ի

Սոցցանցերի հանդեպ հետաքրքրության աճը հանգեցրել է նաև բլոգների հանդեպ հետաքրքրության նվազմանը: Եթե 2009-2011թթ. ընթացքում բլոգներն ունեին բավական ամուր դիրք ցանցում, ապա վերջին մեկ տարվա ընթացքում դրանց հանդեպ հետաքրքրությունը բավական նվազել է, ինչը կարելի է տեսնել, օրինակ, *Blogspot.com* ամենամեծ բլոգային հարթակում, որտեղ թեթևակի նվազել է հայաստանյան այցելուների թիվը: (Հաշվի առնելով, որ այդ ընթացքում օգտ-

վողների թիվը կտրուկ աճել է, իրական վիճակագրությունն ավելի բացասական միտումների մասին է խոսում, տե՛ս *Նկար 8.1*).

Նկար 8.1

Հայաստանից Blogspot.com հարթակի այցելությունների վիճակագրությունը 2009-2013թթ.: Տվյալներն ըստ Google Transparency Report-ի

Այսպիսով, ակնհայտ է, որ Հայաստանում վերջին երկու տարիների ընթացքում դիտվում է ինտերնետից օգտվողների և սոցիալական ցանցերի օգտատերերի կտրուկ, նույնիսկ պայթյունային աճ: Փաստացի, այսօր երկրի բնակչության կեսից ավելին ինտերնետ օգտատերեր են, ինչը բերում է ընդհանուր տեղեկատվական հոսքերի վերաբաշխման:

Շարժական սարքերի շուկան

Շարժական սարքերի Հայաստանի շուկան հավուր պատշաճի գնահատված չէ: Հստակ չէ, թե Հայաստանում քանի օգտատեր է ցանց մտնելու համար օգտվում պլանշետներից, սմարթֆոններից կամ ավելի պարզ հեռախոսներից, որոնք ունեն ինտերնետին միանալու հնարավորություն:

Հանրային հասանելի հավաստի տվյալներ չկան, սակայն շարժական սարքերի տեղական շուկայի մասին կարելի է մոտավոր պատկերացում կազմել այլ աղբյուրներից:

Այսպես, 2012թ. հուլիսին *Mail.RuGroup*-ի ներկայացուցիչը հայտարարեց, որ «Օդնոկլասնիկի» կայք Հայաստանում այցելում է ավելի քան 787 հազար մարդ: Բջջային հեռախոսի միջոցով կայքից օգտվում է շուրջ 272 հազար մարդ՝ այցելուների մոտ մեկ երրորդը:

Ավելի մանրամասն վիճակագրություն է ներկայացնում *Facebook* ցանցը: Մայիսի կեսի տվյալներով՝ այս սոցիալական ցանց Հայաստանից ամսական 470 հազար օգտատեր է այցելում: Նրանցից 193.040-ը՝ մոտ 41%-ը, օգտագործում է շարժական սարքեր:

- 131.120-ը կազմում են այդպես կոչված *«Featured»* հեռախոսները, որոնք արդիական սմարթֆոններ չեն, սակայն ունեն ինտերնետից օգտվելու հնարավորություն,
- 67.680-ը սմարթֆոնների և պլանշետների տերեր են:

Ըստ օպերացիոն համակարգերի սմարթֆոնները և պլանշետները բաշխվում են այսպես.

iOS օպերացիոն համակարգով աշխատում են 58.320 սմարթֆոն և պլանշետ: Դրանցից *iPad*-ները 17.440 են (որոնցից *iPad* 1 – 960, *iPad* 2 – 9.180, *iPad* 3 – 8.080):

iPhone-ները ընդհանուր թվով կազմում են 29.100 (*iPhone* 4 – 9.980, *iPhone* 4S – 11.820, *iPhone* 5 – 9.600): Հայաստանում Ֆեյսբուք մտնում են նաև *iPod*-ի միջոցով՝ 840 օգտատեր:

Android օպերացիոն համակարգով աշխատում են 50.340 սմարթֆոն և պլանշետ: Ըստ արտադրողի՝ *Samsung* – 29.620, *HTC* – 6.720, *Sony* – 3.900, LG - 660, *Motorola* - 240:

Windows օպերացիոն համակարգով աշխատում են 3.060 սմարթֆոն և պլանշետ:

RIM/Blackberry օպերացիոն համակարգով են աշխատում 1.240 սմարթֆոն և պլանշետ:

Հաշվի առնենք, որ նույն օգտատերը կարող է ցանց մտնել մի քանի սարքերից, և այդ պատճառով օգտատերերի ընդհանուր թիվը կարող է մի փոքր տարբեր լինել:

Statcounter ընկերությունն, իր հերթին, կատարում է հաշվարկներ ըստ այն կայքեր այցելություններով, որոնք իրենք դիտարկում են: Այստեղ վիճակագրությունն այդքան էլ ճշգրիտ չէ, անտեսված են սոցցանցերի այցելությունները: Մյուս կողմից, օգտվողները դիտվում են ավելի լայն սպեկտրով: Ըստ այդ վիճակագրության, Հայաստանում հիմնական մրցակցությունն ընթանում է *Nokia, Samsung, Apple* արտադրողների սարքերի միջև (տե՛ս *Նկար 9*): Մյուս կողմից՝ *Android* և *iOS* համակարգերը իշխող դիրքեր են ստանում (տե՛ս *Նկար 10*).

Նկար 9

Տվյալներն ըստ հեռախոսներ արտադրողների՝
2012թ. ապրիլից մինչև 2013թ. ապրիլ



Նկար 10

Տվյալներն ըստ շարժական օպերացիոն համակարգերի՝ 2012թ. ապրիլից մինչև 2013թ. ապրիլ



Եզրակացություններ

Ընդհանուր առմամբ, հայաստանյան համացանցը 2011-2013թթ. ընթացքում ունեցավ որակական և քանակական կտրուկ աճ: Հասարակության համար համացանցը դարձել է հիմնական տեղեկատվության աղբյուրներից մեկը: Այսպես, հայաստանյան 229 լրատվական կայքերը, որոնք գրանցված են *Circle.am* վարկանիշային համակարգում, օրվա ընթացքում 2013թ. հունիսին ունեցել են ընդհանուր առմամբ մոտ 1,4 մլն այցելություն (հաշվի առնենք, որ մի շարք հայտնի լրատվամիջոցներ այս համակարգում գրանցված չեն, այսինքն՝ քանակն ավելի մեծ է, տե՛ս *Նկար 11*): Այդ այցելությունների մոտ 75%-ը հենց Հայաստանից է (տե՛ս *Նկար 12*).

Նկար 11

Հայաստանյան լրատվական կայքերի օրական թրաֆիկի ծավալն ըստ Circle.am համակարգի



Նկար 12

Հայաստանյան թրաֆիկի մասնաբաժինը (այցելություններ) հայաստանյան լրատվական կայքեր՝ ըստ Circle.am համակարգի



Նման զարգացումները թույլ են տալիս ասել, որ համացանցը դառնում է (եթե արդեն չի դարձել) Հայաստանի հասարակության ամենակարևոր տեղեկատվական աղբյուրներից մեկը:

Հունիս, 2013թ.

АРМЯНСКИЙ ИНТЕРНЕТ ЗА 2011-2013 ГОДЫ: ОСНОВНЫЕ РАЗВИТИЯ

Самвел Мартиросян

Резюме

Армянский сегмент Интернета за 2011-2013гг. совершил резкий качественный и количественный скачок. Он стал одним из основных источников информации для общества. У 229 информационных сайтов, зарегистрированных в рейтинговой системе *Circle.am*, в июне 2013 года за день было 1,4 млн. посещений, примерно 75% из которых приходится на Армению. Согласно приводимой в статье довольно любопытной статистике, за последние два года в Армении наблюдается резкий, даже взрывной рост числа пользователей Интернета и соцсетей.